ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման (6-րդ փուլ, 1-ին մաս) աշխատանքների ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 16.02.2016թ. N 1/21-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.02.2016թ. ժամը 10-00-ին, ՀՀ ՖՆ վարչական շենքում, ք. Երևան, Մ.Ադամյան-1 հասցում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մակարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Է.Պողոսյանը, Դ.Շատվերյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

-ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Հ.Մակարյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու համար /16.02.2016թ. թիվ-1/18-2/5419-16 գրությամբ/ միաժամանակյա ծանուցմամբ հրավեր էր ուղարկվել՝ «Սահակյանշին» ՓԲԸ-ին, «Մետրոշինվերանորոգում» ԲԲԸ-ին և «Սպիտակ-Կամար» ՍՊԸ-ին, ինչպես նաև հրավերը նույն օրը հրապարակել էր նաև www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:
-ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
1. «Սահակյանշին» ՓԲԸ-ն (ք.Երևան, Արարատյան-117/1 փ. 8)
-քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:
-գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Սահակյանշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ՝
ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված կարգով.
բ/ բացված ծրարում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան.

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.
«Սահակյանշին» ՓԲԸ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ
1	ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման (6-րդ փուլ, 1-ին մաս) աշխատանքներ՝ 1.Երկրորդ մուտք /տարհանման ճանապարհ/ 2.Սպորտային մասնաշենքի բարեկարգում և հակասողանքային ինժեներական կառույցներ 3.Բացօթյա սպորտհրապարակների բարեկարգում 4.Լրացուցիչ աշխատանքներ 5.Սպորտային համալիրի մանկական ֆուտբոլի դաշտի լուսավորություն 6. Սպորտդաշտերի էլ. լուսավորություն	115 048 856	690 293 137

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝
1. «Սահակյանշին» ՓԲԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

-ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերի պահանջներին բավարարող գնահատված հայտ ներկայացրած և նիստին ներկա «Սահակյանշին» ՓԲԸ-ի տնօրեն Ս.Սահակյանին հրավիրեց մասնակցելու ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 74-րդ կետի 1-ին ենթակետի զ/ կետի պայմաններով բանակցությունների:

-Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին «Սահակյանշին» ՓԲԸ-ն ներկայացրած գնային առաջարկը թողեց անփոփոխ:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1.Ներկայացված հայտի հիման վրա և հաշվի առնելով, որ հիշյալ գնման ընթացակարգին «Սահակյանշին» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ «Սահակյանշին» ՓԲԸ-ին հայտարարել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

2. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հրավերի 2.1 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մակարյան

Անդամներ՝ Է.Պողոսյան

Դ.Շատվերյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան